

ՆՏԴ-479.243

Հայոց պատմություն

Տարոն ՀԱԿՈՐՅԱՆ

ԱրՊՏ, պ.գ.թ, ավագ դասախոս, պատմության ամբիոն

Արցախի պետական համալսարան

E-mail: taronh@rambler.ru

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՐՅԱՆՈՒՄ

(1993 թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին)

Խաղաղարար բանակցային գործընթացում ծագած նոր տարածայնությունները պատճառ հաղիսացան, որ նորից լարվեն փոխհարաբերությունները ԼՂՏ օրենսդիր մարմնի և ՏՏ ղեկավարության միջև:

Օգտագործելով հարմար պահը և լծակները՝ ՏՏ նախագահը սաստկացրեց ճնշումը ԼՂՏ օրենսդիր մարմնի վրա և կարողացավ իշխանափոխություն կատարել ԼՂՏ-ում՝ բերելով իր համար բարենպաստ ուժեր: Իսկ բանակցային գործընթացի անհաջողությունը պայմանավորված էր նրանով, որ հակամարտության կարգավորմանն ուղղված քայլերից և միջազգային մակարդակով ընդունված փաստաթղթերից ոչ մեկը չէր արտացոլում դարաբաղյան հակամարտության էությունը:

Բանալի բառեր՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդ, արտաքին գործերի նախարարություն, բանակցային գործընթաց, ԼՂՏ պաշտպանության բանակ, ազրեխա, արտակարգ հանձնարարությունների գծով դեսպան, մամլո քարտուղար, ԼՂՏ Գերագույն խորհուրդ:

Т.Акопян

ВОЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРЦАХЕ

(июнь-сентябрь 1993г.)

Новые разногласия в миротворческом переговорном процессе стали причиной обострения отношений между законодательным органом НКР и руководством РА.

Пользуясь удобным случаем и рычагами, президент РА ужесточил давление на законодательный орган НКР и смог сменить власть в НКР на более благоприятную для себя. Неудача в переговорном процессе была обусловлена тем, что ни один из шагов, направленных на урегулирование конфликта, и ни один из международных документов не отражали суть карабахского конфликта.

Ключевые слова: Совет безопасности ООН, Министерство иностранных дел, переговорный процесс, Армия Обороны НКР, агрессия, чрезвычайный и уполномоченный посол, пресс-секретарь, Верховный совет НКР.

*T.Hakobyan***MILITARY-POLITICAL SITUATION IN ARTSAKH***(june - september 1993)*

The new discords in the mediation peacemaking process caused the escalation of the relations between the legislative body of the NKR and RA authorities.

Taking the opportunity, the President of the RA toughened the pressure on the legislative body of the NKR and managed to replace the authorities in the NKR with the ones more advantageous for them. The failure of the negotiation process was conditioned by the fact that neither the steps taken for the conflict settlement nor any international document reflected the real point of the Karabakh conflict.

Key-words: *UN Security Council, Foreign Ministry, negotiation process, the NKR Defense Army, aggression, Ambassador Extraordinary and Plenipotentiary, press-secretary, NKR Supreme Council.*

1993թ. հունիսի 3-ին, առանց Հայաստանի Հանրապետության (ՀՀ), Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) եւ Ադրբեջանի Հանրապետության ներկայացուցիչների մասնակցության հռոմում կայացած ԵԱՀԽ խորհրդաժողովը հանդես եկավ մի նոր, այսպես կոչված «9+1» նախաձեռնությամբ: Հայաստանին, ԼՂՀ-ին, Ադրբեջանին ներկայացվեց երկու փաստաթուղթ. մեկը Մինսկի խմբին երկրների հանձնարարությամբ ԼՂ հարցով Մինսկի խորհրդաժողովի նախագահ Մ.Ռաֆայելիի «Նամակն» էր, մյուսը՝ այդ «Նամակին կից» գրությունը, որն այլ կերպ կոչվում էր «Անվտանգության խորհրդի 822 բանաձեռնի իրագործման անհապաղ միջոցառումների ժամանակացույց»:

Նման պայմաններում «ներքին» եւ «արտաքին» ճնշումներ գործադրվեցին ԼՂՀ օրենսդիր մարմնի վրա՝ ստիպելով ստորագրել նշված փաստաթուղթը:

Հունիսի 9-ի կեսգիշերին կարճատև աշխատանքային այցով Երևան ժամանեց Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) մի շարք կարևորագույն զերատեսչությունների բարձրաստիճան անձանցից բաղկացած պատվիրակությունը: ՌԴ արտաքին գործերի (ԱԳ) նախարար Ա.Կոզիրևի եւ ՌԴ անվտանգության նախարար Վ. Բարաննիկովի գլխավորած պատվիրակության կազմում ընդգրկված էին նաև ՌԴ պաշտպանության առաջին փոխնախարար Բ.Գրոմովը, ԱԳ փոխնախարար Բ.Պաստոլսովը, ԼՂ հիմնախնդրի կարգավորման Ռուսաստանի ներկայացուցիչ Վ.Կազիմիրովը եւ Ռուսաստանի սահմանապահ զորքերի հրամանատար Վ.Շյախտինը:

Կառավարության ընդունելությունների տանը տեղի է ունեցավ ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի, ՀՀ ԱԳ նախարար Վ.Փափագյանի, ԱԳ փոխնախարար Ժ.Լիպարիտյանի եւ արտակարգ հանձնարարությունների գծով ղեկավար Դ.Շահնազարյանի 15 րոպեանոց հանդիպումը Ա.Կոզիրևի, Վ.Բարաննիկովի, եւ Վ.Կազիմիրովի հետ: Դրան անմիջապես հաջորդեց վերջիններիս՝ շուրջ 1 ժամ 40 րոպե տևած հանդիպումը ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհուրդի (ԳԽ) նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի ու ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի (ՊՊԿ) նախագահ Ռ.Քոչարյանի հետ¹: Հանդիպման նպատակն էր ԼՂՀ իշխանություններին համոզել դրական պատասխան տալ Ռաֆայելիին²:

Հանդիպումը հետաքրքիր է նաև նրանով, որ Ռուսաստանի բարձրաստիճան ներկայացուցիչները այդպիսի տևական գրույցի էին նստել մի պետության ներկայացուցիչների հետ, որը իրենց իսկ կողմից ճանաչված չէր: Ի՞նչն էր շահագրգռում

¹ «Երկիր», 11.06.1993:

² Ступишин В., Моя миссия в Армению. Москва, 2001, стр. 218 (այնուհետև՝ Ստուպիշին Վ.):

Ռուսաստանին գնալ այդ քայլին: Գուցե Ադրբեջանի ներքին կացությունն ու այստեղ կատարվող իշխանափոխությունը, որը ձեռնառու չէր Ռուսաստանին: Եւ լուսակա՞ն դիվանագիտությունը, գտնվելով անորոշության մեջ, ճիգեր էր գործադրում փրկել Ա.Էլչիբեյի հեղինակությունը:

Եթե փորձենք Արցախի «դրական» պատասխանից հետո մոդելավորել իրադրությունը, ապա այն կարող է զարգանալ հետևյալ կերպ. Քելբաջարի դատարկումով Ադրբեջանի ներկայիս կառավարությունը լուծում էր երկու հարց՝ խուսափում է ռազմական եւ բարոյական պարտությունից եւ լրացուցիչ կովան է ստանում հեղինակությունը բարձրագնելու եւ իշխանությունը պահելու համար:

Իսկ վերջին բանակցային գործընթացների դրական հատկանիշներից մեկն էլ այն է, որ Ստեփանակերտն իրականում ընդունվում էր որպես հակամարտող կողմ, նրա մերժումները եւ ձգձգումները չէին անտեսվում եւ միջազգային հասարակությունն արդեն վարժվել էր Արցախից պատասխան ակնկալել:

Իրերի տարբերությունից ելնելով՝ Արցախի իշխանություններին մնում է ձգձգել բանակցությունների գործընթացը, որպեսզի Ադրբեջանում տիրող ներքաղաքական ճգնաժամը ավելի խորանա եւ Քելբաջարի հարցը, զոնն առժամանակ, ծածկվի նոր իրադարձություններով ու կորցնի իր սրությունը: Այս տարբերակի համար բավարար հիմքեր կան՝ ելնելով նրանից, որ որպես պատճառ կարելի է առաջ քաշել նաև Ադրբեջանի ներքին իրադրության անկայունությունը, որը կարող էր հանգեցնել քաղաքացիական պատերազմի ու կասկածի տակ դնել Ադրբեջանի բանակի կառավարելիությունն ու ադրբեջանական կառավարության տված երաշխիքների հուսալիությունը, հատկապես, որ խռովության մեջ գտվող շրջանների մեծ մասը Քելբաջարի շրջանին սահմանակից էին:

Նման պայմաններում «ներքին» եւ «արտաքին» ճնշումներ գործադրվեցին ԼՂՀ օրենսդիր մարմնի վրա՝ ստիպելով ստորագրել նշված փաստաթուղթը:

Հունիսի 11-ին ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնակատար Գ.Պետրոսյանը նամակ հղեց Մ.Ռ.Աֆայելիին, ուր ասվում էր. «Հարգարժան պարոն Ռ.Աֆայելիի, Ձեր նամակի «ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի N 822/93 բանաձևի իրականացման ժամանակացույցի» քննարկումը ԼՂՀ ԳԽ նախագահության ընդլայնված նիստում լուրջ տարածայնություններ առաջացրեց ԼՂՀ ղեկավարության եւ ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարական կազմի միջև, ինչը, փաստորեն, վերաճեց ներքաղաքական ճգնաժամի: Իրավիճակը կարող է դառնալ անվերահսկելի:

Մենք անում ենք հնարավոր ամեն ինչ՝ առճակատումը կանխելու եւ բացատրելու քննարկման ներկայացված փաստաթղթերի դրական կողմերը: Առարկությունները հիմնված են ԼՂՀ ժողովրդի հերթական անգամ խաբված լինելու մտավայրության վրա:

Անհրաժեշտ են ժամանակ եւ ջանքեր համոզելու մարդկանց, որոնց հոգեբանությունը ձեւավորվել է Ադրբեջանի ագրեսիայի պայմաններում, որ նպատակահարմար եւ խելամիտ են կրակի դադարեցմանն ուղղված առաջարկները: Քանի որ վերջնական որոշում ընդունված չէ, անհրաժեշտություն է առաջացրել Ձեր ներկայացրած փաստաթղթերը լրացուցիչ քննարկելու:

Մենք ապավինում ենք Ձեր եւ ինչպակի անդամ երկրների ներկայացուցիչների կողմից ԼՂՀ ներքաղաքական իրավիճակի ողջ բարդության ընկալմանը եւ դրա կայունության համար Ձեր շահագրգռվածությանը:

Գտնում եմ, որ մոտ օրերս հնարավոր է ԼՂՀ վերջնական դիրքորոշման որոշակիացում¹:

Երևի Ստեփանակերտն իր պատասխանը պայմանավորում էր Ադրբեջանի պատասխանով՝ օգտվելով «Ժամանակացույցի» ստորագրման ժամկետի ընձեռնած ժամանակային խուսափումների հնարավորությունից: Ադրբեջանի մերժողական պատասխանի դեպքում հնարավոր էր նախաձեռնությանը դրական պատասխան տալ՝ հաշվի առնելով դրա վտանգավորությունը:

¹ «Երկիր», 12.06.1993թ.:

Սակայն Երևանում այս պատասխանը բացահայտ դժգոհություն առաջացրեց, բայց ՀՀ ԱԳ առաջին տեղակալ Ժ.Լիպարիտյանը պայմանավորվածություն ձեռք բերեց Իտալիայի Մինսկի խմբի նախագահ Մարիո դե Սիկայի, իսկ հետո Մ.Ռաֆայելիի հետ դարաբաղյան պատասխանի հետաձգման վերաբերյալ¹:

Նման պայմաններում արտաքին ճնշումների ազդեցության տակ ՀՀ իշխանությունները փորձում էին ամեն գնով ստանալ Ղարաբաղի դրական պատասխանը, եւ ահա Երևանը հանդես եկավ հանկարծակի պահանջով, ըստ որի ԼՂՀ ղեկավարները, Գլխավոր նախագահության բոլոր անդամների հետ, պետք է ժամանեին Գորիս՝ հանդիպելու Հայաստանի ղեկավարության հետ: Գորիս ժամանեցին ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը, ՀՀ Գլխավոր նախագահ Բ.Արարքյանը, ՀՀ նախագահի հատուկ հանձնարարությունների գծով անձնական ներկայացուցիչ Դավիթ Ծահնագարյանը, ԼՂՀ Գլխավոր անդամներ: Հանդիպումը կայացավ 1993թ. հունիսի 12-ին: Հանդիպման հիմնական նպատակն էր ամեն գնով սիրաշահել ԼՂՀ Գլխավոր նախագահության անդամներին, որպեսզի նրանք ստորագրեն նշված փաստաթուղթը²:

Սակայն ՀՀ նախագահի հույսերը չիրականացան՝ Գորիսում ԼՂՀ ղեկավարներից նա դրական պատասխան չստացավ: Հանդիպման ժամանակ ԼՂՀ Գլխավոր նախագահի պաշտոնակատարը բանավոր համաձայնություն տվեց ստորագրել փաստաթուղթը, բայց վերջում կտրուկ հրաժարվեց է եւ ուղեւորվեց Ստեփանակերտ:

Հունիսի 12-ի երեկոյան ԱԳ փոխնախարար Ժ.Լիպարիտյանը տեղեկացրեց ՌԴ ղեկավար Վ.Ստուպիշինին, որ դարաբաղյան երկու ղեկավարներն էլ համաձայնվել են ստորագրել «ժամանակացույցը», բայց որոշել են այդ անել Ստեփանակերտում³:

Մինչդեռ Ադրբեյջանում արդեն սկսվել էին լայնածավալ ներքին խռովություններ՝ գնդապետ Ս.Հուսեյնովի գլխավորությամբ: Ապստամբական շարժման արդյունքում Ադրբեյջանում տեղի ունեցավ պետական հեղաշրջում, հունիսի 15-ին խորհրդարանի նախագահ ընտրվեց Վ.Ալիևը, իսկ հունիսի 30-ին վարչապետությունն ստանձնեց 34-ամյա խռովարար գնդապետ Հուսեյնովը⁴:

Հունիսի 12-ին օգտվելով Ադրբեյջանում ստեղծված կացությունից՝ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի (ԻՊՈԻ) ստորաբաժանումները միաժամանակ մարտական գործողություն սկսեցին Մակերանի եւ Մարտունու շրջանների ուղղություններում եւ հասան նկատելի հաջողությունների⁵:

Անհրաժեշտ է նշել, որ Գորիսում ունեցած անհաջող հանդիպումից հետո մարտի 14-ին ՀՀ նախագահը հանդես եկավ ԼՂՀ իշխանություններին քննադատող հետևյալ հայտարարությամբ. «ՀՀ-ն իր խորին մտահոգությունն է հայտնում վճռական պահերին որոշում կայացնելու, պատասխանատվություն ստանձնելու հարցում ԼՂ իշխանությունների դրսևտրված անկարողության, ինչպես նաև զինադադար հաստատելու բացառիկ պատենությունը չիրագործելու համար:

ՀՀ-ն վստահ է, սակայն, որ ԼՂ իշխանությունները կկարողանան բարձր կանգնել երկրորդական ու նախաձեռնության հետ չառնչվող նկատառումներից՝ դրսևտրելով իրենց իբրև իսկական ղեկավարներ, եւ, քանի դեռ ուշ չէ, անհրաժեշտ որոշում կայացնել ի շահ ԼՂ ժողովրդի անվտանգության ու խաղաղության՝ գիտակցելով սեփական ժողովրդի ճակատագրի նկատմամբ ու պատմության առջև իրենց պատասխանատվությունը»⁶:

Այնուհետև նույն օրը՝ կեսօրից հետո, ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը հանկարծակի ուղղաթիռով ժամանեց Ստեփանակերտ: Դա նրա առաջին

¹ Ստուպիշին Վ., նշվ. աշխ., էջ 219:

² Հակոբյան Ս., *ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994թթ.)*, Եր. 2011, էջ 177:

³ Ստուպիշին Վ., նշվ. աշխ., էջ 219:

⁴ Арутюнян В., События в Нагорном Карабахе, хроника часть V, январь 1993г.-июль 1995, Ереван, 1997, стр. 102 (այսուհետև՝ Վ.Հարությունյան)

⁵ Բալայան Վ., *Արցախի պատմություն, հնադարից մինչև մեր օրերը*, Եր., 2002, էջ 402-403:

⁶ «Երկիր», 15.06.1993.:

պաշտոնական այցն էր ԼՂՀ: Նախագահը պահանջեց շտապ հրավիրել Գլխավոր նախագահության նիստ¹: Նա իր հետ բերել էր մի կարևոր գաղտնի քաղաքական փաստաթղթի նախագիծ, որը կոչվում էր «Պայմանագիր ՀՀ և ԼՂՀ միջև»²: Այն պետք է ստորագրեին ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը, ԼՂՀ Գլխավոր նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը և ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռ.Քոչարյանը: Վերջինս կողմնակից էր փաստաթղթի ստորագրմանը, իսկ ինչ վերաբերում էր բանակի հրամանատարությանը, ապա այն հայտարարել էր, որ կընդունի իշխանության ցանկացած որոշում³:

Հունիսի 14-ի երեկոյան տեղի ունեցավ ԼՂՀ Գլխավոր նախագահության և ՊՊԿ անդամների համատեղ նիստ: Նախկին ԼՂՀ Գլխավոր մամլո քարտուղար Գ.Բաղդասարյանի և ԼՂՀ Գլխավոր նախագահության որոշ անդամների տեղեկությունների համաձայն՝ ՀՀ նախագահը փորձել է համոզել ԼՂՀ Գլխավոր նախագահության անդամներին, որ Քելբաջարից հայկական ուժերի դուրս բերումը Ռուսաստանի դիվանագիտական ճնշման հետևանք է և այն չիրականացնելու դեպքում Հայաստանը կկորցնի Ռուսաստանին որպես դաշնակից, ինչը կարող է ճակատագրական լինել և Ղարաբաղի, և Հայաստանի համար: ԼՂՀ ղեկավարության վրա ազդելու համար օգտագործվել են նաև այնպիսի փաստարկներ, որոնք դուրս են դիվանագիտության և բանավեճերի ընդունված սահմաններից⁴: Տարօրինակ էր ՀՀ իշխանությունների պահվածքը, որոնք փաստորեն փորձում էին Քելբաջարի հանձնման պատասխանատվությունը ամբողջովին զցել Ղարաբաղի իշխանությունների վրա: Ինչպես վկայում է ԼՂՀ նախկին Գլխավոր նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը, Հայաստանը հետ էր քաշվում Քելբաջարից և հանձնելու դերը դնում Ղարաբաղի վրա⁵:

Այդ տիպի ներկայացումն ունեցավ հետևյալ վախճանը. չղիմանալով Լ.Տեր-Պետրոսյանի ճնշումներին՝ ԼՂՀ Գլխավոր նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը հրաժարվեց ստորագրել և հրաժարական տվեց: Նախագահությունը ընդունեց նրա հրաժարականը, և «ԼՂՀ Գլխավոր մասին» օրենքի համաձայն՝ Գլխավոր նախագահի պարտականությունները մինչև Գլխավոր նստաշրջանը դրվեցին նախագահի առաջին տեղակալի պաշտոնակատար կարեն Բաբոյրյանի վրա⁶, իսկ վերջինս ստորագրեց «Անհապաղ միջոցառումների իրականացման ժամանակացույցը»:

Ստեփանակերտ կատարած ուղևորության արդյունքներից գոհացած՝ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը Երևան վերադառնալուց հետո անմիջապես շնորհավորական հեռագիր ուղարկեց ԼՂՀ Գլխավոր նախագահի նոր պաշտոնակատար Կ. Բաբոյրյանին, որում ասված էր. «...ԼՂՀ Գլխավոր նախագահի պաշտոնում Ձեր առաջին գործողությունները ցույց են տալիս Ձեր քաղաքական հասունությունը, ինչպես և Արցախի ժողովրդի ճակատագրական պահին պատասխանատվությունը իր վրա վերցնելու անձնական համարձակությունը...»⁷:

Հարկ է նկատել, որ ՀՀ նախագահը նման հեռագիր երբևից չի հղել ԼՂՀ Գլխավոր նախկին նախագահ Ա. Մկրտչյանին կամ նրանից հետո այդ պաշտոնն ստանձնած Գ. Պետրոսյանին:

Այդ հեռագրին հաջորդեց ԼՂՀ Գլխավոր նախագահի պաշտոնակատար Կ. Բաբոյրյանին պաշտոնական այցով Հայաստան ժամանելու հրավերը: Երկօրյա այցի ընթացքում Կ. Բաբոյրյանը հանդիպումներ ունեցավ ՀՀ փոխնախագահի, Գլխավոր նախագահի, վարչապետի, արտգործնախարարի և տեղակալի, ինչպես նաև Հայաստանում

¹ Աբրահամյան Հ., *Ճակատագրին ընդառաջ*, Երևան, 2001, էջ 203:

² ԼՂՀ առաջին գումարման Գլխավոր քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու հանգուցյալ Վ. Հակոբյանի անձնական արխիվ:

³ «*Երկիր*», 15.06.1993.:

⁴ Նույն տեղում:

⁵ ԼՂՀ նախկին առաջին գումարման Գլխավոր նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի հետ հեղինակի գրույցի գրառում, 17.06.2006:

⁶ «*Արցախ*», 17.06.1993:

⁷ «*Հայաստանի Հանրապետություն*», 18.06.1993:

հավատարմագրված դիվանագիտական կորպուսի հետ, իսկ հունիսի 23-ին տեղի ունեցավ ԼՂՀ ԳՆ նախագահի նոր պաշտոնակատարի և ՀՀ նախագահի հանդիպումը¹: Հայաստանում Կ. Բաբուրյանն արժանացավ ջերմ ընդունելության, և այդպիսով, հիմք դրվեց ՀՀ և ԼՂՀ իշխանությունների միջև որակական նոր հարաբերությունների²:

Ադրբեջանում շարունակվող և հարաճուն կերպով ահագնացող ներքին անկայունության հետ կապված՝ 1993թ. հունիսի 17-ին և 18-ին ԼՂՀ ԳՆ նախագահի պաշտոնակատար Կ.Բաբուրյանը նամակներ հղեց Մ.Ռաֆայելիին:

Եվ իրոք, հուլիսի առաջին տասնօրյակում ադրբեջանական բանակը խոշոր հարձակում էր սկսել ռազմաճակատի՝ միաժամանակ երեք հատվածներում՝ Սակերանի, Հադրոթի և Մարտակերտի: Սակայն, չնայած այն հանգամանքին, որ այդ բոլոր ուղղություններում էլ հակառակորդը մարտադաշտ էր նետել և՛ օդուժը, և՛ մեծաքանակ զրահատեխնիկա, նա հետ շարավեց դեպի ելման դիրքեր, և ԻՊ ուժերի վերահսկողության տակ անցավ Ադդամի շրջանի Շելլի գյուղի մոտակա ռազմավարական կարևոր բարձունքը:

Այդ առնչությամբ, ԼՂՀ ԳՆ նախագահի պաշտոնակատար Կ. Բաբուրյանը³ և ԴԴԿ նախագահ Ռ. Քոչարյանը⁴ հանդես եկան հայտարարություններով՝ Ադրբեջանին մեղադրելով վերջին ռազմագործողությունների ծավալման համար:

Սակայն դրանով պատերազմական գործողությունները չդադարեցին: Ծարունակելով զարգացնել հակառակորդից խլված ռազմական նախաձեռնությունը՝ ԻՊ ուժերը հուլիսի 22-23-ը փայլուն ռազմագործողության շնորհիվ լուծեցին Ադդամի խնդիրը: Այդ փաստը դժկամությամբ ընդունեց միջազգային հանրությունը: Կատարվածը շվեդուցիչ հարված էր Ադրբեջանի ռազմական մեքենային: Ադդամի կորստից հետո Ադրբեջանը հարկադրված էր գնալ ԼՂՀ-ի հետ ուղղակի շփումների⁵:

Հուլիսի 28-ին ԼՂՀ Մարտակերտի շրջանի ճակատային գծում կայացավ ԱՀ և ԼՂՀ իշխանությունների ներկայացուցիչների հանդիպումը: Հանգամանալի քննարկումներից հետո վերահաստատվեց հրադադարի մասին մի քանի օր առաջ ձեռք բերված պայմանավորվածությունը: Քննարկվեցին նաև երկու հանրապետությունների ղեկավարների բարձր մակարդակի հանդիպման հնարավորության, ռազմագերիներին և պատանդներին առնչվող հարցեր: Սակայն հաջորդ օրը Ադրբեջանը դարձյալ հրաժարվեց իր ստանձնած պարտավորություններից⁶:

Պետք է կարծել, որ Ադրբեջանի համար նման մարտավարություն որդեգրելու որոշակի հիմքեր էին տալիս միջազգային հանրության ադրբեջանամետ գործողությունները դարաբաղյան հակամարտության կարգավորման ասպարեզում: Այդ գործողություններից մեկն էլ ՄԱԿ-ի ԱՆ-ի հուլիսի 29-ին կատարած անդրադարձն էր ԼՂՀ-ում տեղի ունեցած վերջին իրադարձություններին, երբ ընդունվեց N 853 բանաձևը⁷: Այդ փաստաթուղթը, ինչպես և նախորդը, նույնպես ադրբեջանամետ էր:

Այդ կապակցությամբ, ԼՂՀ ԳՆ նախագահի պաշտոնակատար Կ. Բաբուրյանը նամակ հղեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բ. Ղալիին, որտեղ, մասնավարապես, ասվում էր. «...ԼՂՀ-ն ստիպված է ափսոսանքով արձանագրել, որ ՄԱԿ-ի ԱՆ N 853 բանաձևին ընդունվել է ոչ ստույգ և կողմնապահ տեղեկությունների հիման վրա: Մենք գանկանում ենք գոնե հուսալ, որ N 853 բանաձևը, որի մեջ տեղ են գտել Թուրքիայի Հանրապետության ներկայացուցիչների կողմից առաջարկված մի շարք ձեռակերպումներ, չի ձախողի վերջին ժամանակներս սկսված՝ Ադրբեջանի և ԼՂՀ-ի ղեկավարությունների ներկայացուցիչների միջև ուղղակի երկկողմանի կապերի հաստատումը: Այս կապակցությամբ ես անհրաժեշտ եմ համարում դիմել Ձեզ, պարոն

¹ «*Երկիր*», 24.06.1993:

² «*Երկիր*», 26.06.1993:

³ «*Հայաստանի Հանրապետություն*», 03.07.1993:

⁴ Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 127-128:

⁵ Հակոբյան Տ., նշվ. աշխ., էջ 186:

⁶ «*Երկիր*», 30.07.1993:

⁷ <http://www.un.org/russian/documen/scresol/res1993/res853.htm>

զլխավոր քարտուղար, խնդրանքով՝ ՄԱԿ-ի մշտական ներկայացուցիչ ուղարկել ԼՂ, որպեսզի նա տեղում ծանոթանա իրադրությանը և կարողանա տարածաշրջանի իրադարձությունների մասին անկողմնակալ տեղեկություններ տալ Անվտանգության խորհրդին՝ հենվելով սեփական դիտարկումների և արված հավաստի տեղեկությունների վրա: ԼՂ ղեկավարությունը վստահություն է հայտնում, որ միջազգային հանրության կողմից ԼՂՀ-ի անկախության ճանաչումը կարագացնել մեր տարածաշրջանում ռազմական հակամարտության քաղաքական կարգավորումը...»¹

Ինչպես տեսնում ենք, միջազգային հանրությունը ադրբեջանամետ քաղաքականություն էր վարում՝ ճնշում գործադրելով ՀՀ և ԼՂՀ իշխանությունների վրա: Եվ դա թեև էր տալիս Ադրբեջանի ղեկավարությանը՝ օրեցօր ընդլայնելու ռազմական գործողությունները, հույս ունենալով, թե հայկական կողմը տեղի կտա ռազմական ու դիվանագիտական ճնշման տակ: Սակայն ԻՊ ուժերը իրենց առջև հստակ նպատակ էին դրել. ոչ միայն ճնշել ադրբեջանական բանակի կրակակետերը, այլև ազատագրել հինավուրց հայկական հողերը:

Օգոստոսի երկրորդ կեսերին մարտեր ծավալեցին Ֆիզուլի-Ջաբրայիլ-Ղուբաթու գծի ամբողջ երկայնքով, և, չդիմանալով ԻՊՈՒ գորամասերի ճնշմանը, ադրբեջանական զորքերը օգոստոսի 22-ին թողնեցին Ֆիզուլի քաղաքն ու համանուն շրջանը: Հաջորդ օրը, զարգացնելով հարձակումը, դարաբաղյան զորքերը մտան Ջաբրայիլ շրջկենտրոնը, իսկ նա երկու օր անց՝ իրենց վերահսկողության տակ առան այդ շրջանի ամբողջ տարածքը: Այս հաջողությունների շնորհիվ օգոստոսի 26-ին, վերջապես, լիովին ազատագրվեց ԼՂՀ Հադրութի շրջանը: Սակայն ադրբեջանական կողմը հապճեպ ձեռնարկած հակարածակողական գործողություններով ձգտում էր ինչ-որ կերպ փոխհատուցող ճեղքումներ կատարել Լաչինի մարդասիրական միջանցքից դեպի հարավ ընկած դարաբաղյան պաշտպանական գծում և այդ փորձը ձեռնարկեց օգոստոսի 29-ին, սակայն, հետ շարվելով ԻՊՈՒ ստորաբաժանումների հուժկու հարվածների տակ, ադրբեջանական կազմավորումները լիակատար խուճապի մատնվեցին: Նրանք հարկադրված եղան օգոստոսի 31-ին թողնել նաև Ղուբաթու շրջկենտրոնը²:

Ընդամենը մեկ ամսվա ընթացքում կորցնելով երեք շրջան՝ ադրբեջանական զինուժը կանգնեց լիակատար կրակի եզրին: Եվ հավանաբար, Ադրբեջանի ղեկավարությունը մինչև Դուբաթուի կորուստն էր սկսել ջանքեր գործադրել դիվանագիտական ճանապարհով կազնեցնելու ԻՊ ուժերի հաղթարշավը: Այդ մասին է վկայում այն փաստը, որ հենց Դուբաթու շրջկենտրոնի անկման օրը ՌԴ ԱԳՆ-ի միջնորդությանը ԱՏ-ի և ԼՂՀ-ի պատվիրակությունների միջև համաձայնագիր ստորագրվեց կրակը 10 օրով դադարեցնելու մասին, ինչպես նաև պայմանավորվածություն ձեռք բերվեց մինչև սեպտեմբերի 10-ը ԱՏ և ԼՂՀ ղեկավարների հանդիպում անցկացնելու վերաբերյալ:

Համաձայնագիրն ստորագրել են ԼՂՀ-ի կողմից՝ ԱԳ նախարար Ա. Ղուկասյանը և ԼՂՀ Պաշտպանության բանակի հրամանատար Ս. Բաբայանը, Ադրբեջանի կողմից՝ Գլխ նախագահի տեղակալ Ա. Ջալիլովը և պաշտպանության նախարարի պաշտոնակատար Ս. Աբիևը³: Առանձնակի ուշադրության է արժանի Ա.Ջալիլովին ԱՏ և ԼՂՀ ղեկավարների հանդիպումը կազմակերպելու մասին բանակցություններ վարելու համար լիազորող փաստաթուղթը, որը ստորագրված է, ինչպես նշված է նրա մեջ, «ԱՏ նախագահի լիազորություններն իրականացնող, ԱՏ Գլխ նախագահ Տեյդրար Ալիևին»՝ ձեռքով: Ահա 1993թ. սեպտեմբերի 3-ի թվագրությամբ 171 համարը կրող այդ փաստաթուղթը. «Ադրբեջանի ղեկավարությունը Գլխ նախագահի տեղակալ Ա. Ջալիլովին լիազորում է բանակցություններ վարել Ադրբեջանի և ԼՂՀ ղեկավարների հանդիպում կազմակերպելու մասին»⁴:

¹ «Երկիր», 06.08.1993:

² <http://www.nkr.am/arm/history/voina.htm>

³ «Երկիր», 01.09.1993թ.:

⁴ Հակոբյան Տ., նշվ. աշխ., էջ 190:

Տարօրինակ է, որ այս փաստաթուղթը, որը Վ.Ալիևի կողմից ԼՂՀ-ի փաստացի ճանաչման անժխտելի վկայությունն է, երկար ժամանակ դուրս է մնացել ինչպես ՀՀ եւ ԼՂՀ ղեկավարների ու դիվանագետների, այնպես էլ՝ դարաբաղյան հիմնահարցով զբաղվող պատմաբանների ուշադրությունից: Մինչդեռ, համոզված ենք, որ եթե ադրբեջանական կողմի շահերին նպաստող նման մի փաստաթուղթ հայտնվեր ադրբեջանցի դիվանագետների ձեռքում, նրանք չէին հապաղի՝ այն օգտագործել որպես իսկական փաստաթուղթ:

Եվ այսպես, սեպտեմբերի 12-13-ին տեղի ունեցան նախատեսված ադրբեջանա-դարաբաղյան բանակցությունները, որոնք վարում էին ադրբեջանական կողմից՝ Ա. Ջալիլովը, իսկ ԼՂՀ-ի կողմից՝ Ա. Ղուկասյանը: Ընդունվեց համատեղ կոմյունիկե, ըստ որի՝ հրադարարի համաձայնագիրը երկարաձգվեց 20 օրով (մինչև հոկտեմբերի 5-ը)¹:

Այսպիսով՝ Արցախի իշխանությունները, հաղթահարելով իրենց ճանապարհին ծագած վայրիվերումները, շրջանցելով միջազգային ասպարեզում հարուցված դիվանագիտական խոչընդոտները, ադրբեջանական ազրեսիայի դեմ ձեռք բերված վճռական հաղթանակների շնորհիվ հաստատեցին իրենց շարունակական լինելու իրավունքը:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ., պրոֆեսոր Վ.Ռ.Բալայանը:

¹ Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 193: